## ՊՐՈՖԵՍՈՐ ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ 85-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

*Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը հայտնի անուն է գիտական շրջանակներում, նա հայ արևելագիտության հիմնադիրներից և հիմնասյուներից մեկն է, որն անգնահատելի ավանդ ունի ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հիմնադրման, ձևավորման ու զարգացման բնագավառում: Նրա անվան հետ է կապված արևելագիտական մի շարք ուղղությունների հիմնումը և զարգացումը ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս: Նա Գիտության վաստակավոր գործիչ է, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ. գ. դ., պրոֆեսոր, ականավոր արևելագետ-գիտնական, արաբագետ, միջազգայնագետ, ով հասել է միջազգային արժանի ճանաչման: Այս տաղանդավոր գիտնականը արտասահմանյան բազմաթիվ ակադեմիաների և գիտական ընկերությունների (Փարիզ, Նյու Յորք, Մոսկվա, Գերմանիա, Սիրիա և այլն) անդամ է, նաև գիտության ականավոր կազմակերպիչ ու գիտական կոլեկտիվների նրբանկատ ղեկավար: Նա հավատարիմ իր բուհական միջազգայնագետի մասնագիտության սկզբունքներին՝ իր ողջ գիտական կենսագրության ընթացքում միշտ և ամենուրեք արդարացրել է միջազգայնագետի իր նախընտրած մասնագիտությունը:*

*Ն. Հովհաննիսյանի ակտիվ ջանքերով 1961 թ. Հայաստանի ԳԱ արևելագիտության ինստիտուտում հիմնվեց Արաբական երկրների բաժին, որը նա գլխավորեց մինչև XX դարի վերջերը: 1984 թ. մայիսից 1995 թ. փետրվար նա զբաղեցնում էր Արևելագիտության ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալի, իսկ 1995 թ. միաձայն ընտրվում այդ նույն գիտական կարևոր կենտրոնի տնօրենի պաշտոնում, որը զբաղեցրել է մինչև 2006 թ. վերջերը: Այնուհետև նա նշանակվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի խորհրդական ու Մերձավոր և Միջին Արևելքի միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների բաժնի վարիչ: 2007 թվականից համատեղությամբ զբաղեցնում է նաև ՀՀ պաշտպանության նախարարության Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի պետի*

*խորհրդականի պաշտոնը: Պրոֆ. Ն. Հովհաննիսյանը վճռական դեր է խաղացել հայ արևելագիտության հիմնական ուղղությունների ձևավորման, հեռանկարային, արդիական և նոր ուղղությունների սահմանման գործում: Նրա շնորհիվ է նաև, որ հնարավոր եղավ պահպանել հայ արևելագետների գենոֆոնդը ԽՍՀՄ փլուզումից հետո՝ գիտության համար ստեղծված ոչ նպաստավոր և դժվարին ժամանակներում: Ն. Հովհաննիսյանի անվան հետ է կապված նաև Արևելագիտության ինստիտուտում գիտական նոր միավորի՝ Արևելյան Ասիայի բաժնի ստեղծումը, որի հիմնադրմանն ու առաջին տարիների ղեկավարմանը պատիվ եմ ունեցել անձամբ մասնակցելու: Նրա գիտական հետաքրքրությունների կենտրոնում ավելի քան կես դար գտնվել են արաբական երկրների պատմության, Մերձավոր և Միջին Արևելքում միջազգային ու տարածաշրջանային հարաբերությունների, քաղաքական իսլամի, բախումնաբանության, ցեղասպանության և արդիական այլ գիտական ուղղությունների հիմնահարցերի ուսումնասիրությունը: Նա այդ բոլոր հիմնախնդիրներն ուսումնասիրել է՝ սերտորեն շաղկապելով հայ ժողովրդի պատմության հարցերի հետ, վեր հանել Հայաստանի՝ որպես գործոնի կարևորությունը Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանի պատմության հոլովույթում, ցույց տվել այն առաջավոր դերակատարումը, որ հայերն ունեցել են նշված տարածաշրջանի երկրների ու ժողովուրդների պետական, քաղաքական և տնտեսական կյանքում, կառավարման համակարգում, ինչը շատ հաճախ եղել է անկյունաքարային: Հայկական շերտի զոդումը արևելագիտական հիմնախնդիրների հետ մի առանձին նշանակություն և գրավչություն է տալիս Ն. Հովհաննիսյանի աշխատություններին, որի հետևանքով դրանց թարգմանությունը այլ լեզուներով դարձել է անհրաժեշտություն, հայտնվել օտար հեղինակների ու մասնագետների գիտական ուշադրության կենտրոնում և արժանացել նրանց բարձր գնահատականին:*

*Իր 55-ամյա գիտական գործունեության ընթացքում պրոֆ. Հովհաննիսյանը հեղինակել է ավելի քան 540 գիտական աշխատություն, այդ թվում՝ մոտ 80 մենագրական ուսումնասիրություն և 400 գիտական հոդված: Նրա մենագրական ուսումնասիրություններից շուրջ 30-ը, իսկ հոդվածներից ավելի քան 100-ը հրատարակվել է արտասահմանյան տարբեր երկրներում՝ արաբերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, ճապոներեն, պարսկերեն, հունգարերեն, թուրքերեն և այլ լեզուներով: Պրոֆեսորը հեղինակն է արաբական երկրներում՝ Իրաքում, Լիբանանում, Սիրիայում, Եգիպտոսում ազգային-ազատագրական շարժումների ուսումնասիրությանը նվիրված յոթ հատորների, որոնք լույս են տեսել Երևանում, Մոսկվայում, Բեյրութում, Հալեպում, Բեռլինում, Շտուտգարտում, Կահիրեում և այլուր: Արևելագիտության բնագավառում դե-*

*ռևս ոչ մի հեղինակ այդպիսի լայն ընդգրկումով և քանակով ընթերցողի սեղանին չի դրել նման ուսումնասիրություններ, որոնցից մի քանիսն առաջինն էին այդ բնագավառում: 1968 թ. Մոսկվայում ռուսերեն լեզվով «Նաուկա» հրատարակչությունը լույս ընծայեց նրա «Անկախ Սիրիական Հանրապետության կազմավորումը» մենագրությունը:*

*Հետաքրքրությունն ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ այդ շրջանում համայն աշխարհում այնքան բարձր էր, որ 1974 թ. Բեյրութում արաբերեն թարգմանությամբ լույս տեսավ նրա «Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում» մենագրությունը, որը շատ բարձր գնահատեցին մասնագետները ոչ միայն Լիբանանում, այլև արաբական մյուս երկրներում: Այս աշխատությունները մեծ ճանաչում ու հռչակ բերեցին հայ գիտնականին արաբական երկրներում, Եվրոպայում և ԱՄՆ-ում, միաժամանակ բարձրացրեցին հայ արևելագիտության միջազգային հեղինակությունը: Ն. Հովհաննիսյանի այդ ուսումնասիրությունները խթանեցին ազգային-ազատագրական շարժումների ուսումնասիրությունը արաբական, ասիական, եվրոպական երկրներում և դրանց ազդեցությամբ Լիբանանում, Սիրիայում, Իրաքում հայտնվեցին մի շարք նոր ուսումնասիրություններ, որոնց հիմքում դրված են Հովհաննիսյանի հայեցակարգային դրույթները: Այդ աշխատությունները որպես ուսումնական ձեռնարկներ են օգտագործվել Լիբանանի, Սիրիայի և Իրաքի մի շարք ուսումնական հաստատություններում:*

*Վաստակաշատ գիտնականի աշխատություններում իրենց արժանի տեղն են գրավում արաբական երկրների պատմության, հայ-արաբական, այդ թվում՝ հայ-արաբական միջպետական հարաբերությունների բազմակողմանի ուսումնասիրությունը, որոնք ընդգրկում են պատմական տարբեր ժամանակաշրջաններ: Դրանց թագն ու պսակը կազմում է նրա «Արաբական երկրների պատմությունը*

*(VII դ., 2005 թ.)» քառահատոր կոթողային աշխատությունը: Արաբ գիտնականպատմաբաններն անգամ խոստովանում են, որ նույնիսկ իրենք չունեն նման հիմնարար աշխատություն՝ ավելացնելով, որ պետք է օրինակ վերցնեն հայ գիտնականից, որը կարողացել է սեղանին դնել արաբական բոլոր 18 պետությունների պատմությունը VII դարից, այսինքն՝ իսլամի ի հայտ գալուց և Արաբական խալիֆայության կազմավորումից մինչև մեր օրերը: 2011 թ. արաբական աշխարհի գիտնականների և լայն ընթերցողների դատին հանձնվեց քառահատոր այդ աշխատության արաբերեն հրատարակությունը, ինչն աննախադեպ իրադարձություն դարձավ հայ արևելագիտության պատմության մեջ:*

*Պրոֆ. Հովհաննիսյանը հայտնի է աշխարհի արևելագետների և արաբագետների շրջանում իր ստեղծագործ գաղափարներով ու հայեցակարգով, արաբա-*

*կան աշխարհի հանգուցային հարցերի նկատմամբ նոր մոտեցումներով: Եվ միանգամայն բնական է, որ Քեմբրիջի (Անգլիա) Միջազգային կենսագրական կենտրոնը 2004 թ. նրան հռչակել է «XXI դարի ականավոր գիտնական», 2005 թ. ճանաչել է «Աշխարհի առաջատար գիտնական», իսկ 2009 թ. ընդգրկվել է «Աշխարհի ամենաականավոր 100 գիտնականների ցանկում»:*

*Ն. Հովհաննիսյանի ուսումնասիրություններում իր արժանի տեղն է գրավում Մերձավոր Արևելքում միջազգային հարաբերությունների քննությունը, որին նվիրված են նրա մի քանի մենագրական աշխատություններ և բազմաթիվ հոդվածներ: Դրանց շարքում իր նշանակությամբ առանձնանում է 1980 թ. ռուսերենով հրատարակված «Իմպերիալիստական պետությունների քաղաքականությունն Արաբական արևելքում Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին» մենագրական ուսումնասիրությունը: Հենվելով անգլիական, ամերիկյան, ֆրանսիական, գերմանական, իտալական և ռուսական պաշտոնական աղբյուրների ու դիվանագիտական փաստաթղթերի վրա, նա կարողացել է բացահայտել Արաբական Արևելքի դերը Երկրորդ համաշխարհային պատերազմում:*

*Վաստակաշատ պատմաբանը առաջինն էր, որ լրջորեն ձեռնամուխ եղավ անկախ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության հայեցակարգի մշակմանը և ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի ու Իսրայելի հետ նրա արտաքին հարաբերությունների առարկայական ուսումնասիրությանը, որոնք իրենց արտացոլումը գտան անգլերեն լեզվով հրատարակված «Հայաստանի արտաքին քաղաքականությունը» ուսումնասիրության մեջ (The Foreign Policy of Armenia, Yerevan, 1998):*

*Արտաքին քաղաքականության հարցերին նվիրված աշխատությունների շարքին են պատկանում նաև Ն. Հովհաննիսյանի «Դիվանագիտություն», անգլերեն լեզվով գրված և ԱՄՆ-ի Բերկլիի համալսարանի կողմից հրատարակված «Հայաստանի Հանրապետություն. Քաղաքականություն և Դիվանագիտություն» (Republic of Armenia. Politics and Diplomacy, «Newsletter», Berkeley, v. 1, -1, Winter, 1995) և մի շարք այլ աշխատություններ, որոնք նույնպես գնահատվել են ըստ արժանվույն տարբեր երկրների մասնագետների կողմից: Մասնագետների բուռն հետաքրքրությունն առաջացրին Հովհաննիսյանի անգլերեն լեզվով հրատարակած ևս երկու աշխատություններ՝ «Ղարաբաղի պրոբլեմը: Գործոններ. Չափանիշներ. Լուծման տարբերակներ» և «Անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի ձևավորումը»:*

*Հիշում եմ 2010 թ. Իտալիայում որպես դեսպան իմ պաշտոնավարման ընթացքում Ն. Հովհաննիսյանի «Ղարաբաղյան հիմնախնդիրը. Ազատության և անկախության փշե ճանապարհը» գրքի իտալերենով հրատարակության առ-*

*թիվ կազմակերպված շնորհանդեսը՝ Հռոմի հեղինակավոր միջազգային հարաբերությունների ինստիտուտում: Ն. Հովհաննիսյանի այդ գիրքը, հանդիսանալով առաջին գիտական աշխատությունը ԼՂ-ի հիմնախնդրի վերաբերյալ, մեծ հետաքրքրություն առաջացրեց իտալական դիվանագիտական ու քաղաքական շրջանակներում, նաև շոշափելի ներդրում ունեցավ Իտալիայում մեզ համար այդ կենսական հարցի լուսաբանման ու հանրայնացման գործում:*

*Ն. Հովհաննիսյանն ինչ հարցերով էլ որ զբաղվի, միևնույն է, պարբերաբար վերադառնում է հայ ժողովրդի համար սկզբունքային նշանակություն ունեցող մի այնպիսի հարցի, որպիսին Հայոց ցեղասպանության հարցն է: Նա այդ հիմնախնդրի լուսաբանությանը նվիրել է մոտ մեկ հարյուր աշխատություն, այդ թվում՝ տասնյակից ավելի մենագրական ուսումնասիրություն: Հայոց ցեղասպանությանը նվիրված աշխատությունների շարքում իր կարևորությամբ և ինքնատիպությամբ վեր են խոյանում Ն. Հովհաննիսյանի երկու յուրատիպ մենագրությունները՝ «Հայոց ցեղասպանություն: Հայասպանություն՝ ամենացեղասպան ցեղասպանություն. աշխարհի տասը լեզուներով՝ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, գերմաներեն, թուրքերեն, ճապոներեն, հունգարերեն, հայերեն, արաբերեն և պարսկերեն» և «Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է»: Այդ զույգ մենագրություններն առաջացրին տարբեր երկրների ցեղասպանագետների, պետական, քաղաքական, կուսակցական գործիչների, օրենսդիրների աննախադեպ հետաքրքրությունը: 2010 թ. հունվարին Երևանի Թեքեյան մշակութային կենտրոնում, իսկ հունիսին ԱՄՆ-ի Հայ իրավաց խորհրդի կողմից Լոս Անջելեսում կազմակերպված այդ ուսումնասիրությունների հրապարակային քննարկումների մասնակիցները միակարծիք էին այն հարցում, որ դրանք նորույթներ են, չունեն իրենց նախադեպերը և ծանր հարված են Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական քաղաքականությանը: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ էլ հրատարակվեց Ն. Հովհաննիսյանի հերթական՝ «Հայոց ցեղասպանությունը հաստատված է միջազգային գիտական, իրավական և մարդու իրավունքների հանրության կողմից» մենագրությունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:*

*Անվանի արևելագետը չէր կարող չբարձրաձայնել Սիրիայի հայ համայնքի օրհասական վիճակի կապակցությամբ: Սբ. Էջմիածնի Մայր Աթոռում 2014 թ. հունիսին գումարված միջազգային համաժողովին նա ներկայացրեց չափազանց կարևոր զեկուցում՝ Մերձավոր Արևելքի ու Սիրիայի հայ համայնքները և նրանց խնդիրները թեմայով, որն արժանանալով մեծ ուշադրության, համաժողովի կազմակերպիչ՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի քարտուղար*

*Օլաֆ Թվեյթի առաջարկով ուղարկվեց կազմակերպության կենտրոնական, այնուհետև հրատարակվեց առանձին գրքույկով՝ հայերեն և անգլերեն:*

*Ն. Հովհաննիսյանը վաղուց դարձել է միջազգային լայն ճանաչում և հեղինակություն ունեցող, փնտրված գիտական արտասահմանյան շատ գիտական կենտրոնների հետ համատեղ աշխատանքներ կատարելու համար: Նա Երուսաղեմի համալսարանի Հարրի Տրումենի Խաղաղության ինստիտուտի հրավերով ու Հորդանանի արքայական գիտական կենտրոնի մասնակցությամբ աշխատել է «Մեծ Մերձավոր Արևելք» ծրագրի վրա, Հյուսթոնի համալսարանի Ջեյմս Բեյքերի Քաղաքականության ինստիտուտի պատվերով գրել է աշխատություն դարաբաղյան հարցի ծագման, բնույթի և լուծման ուղիների, Կասպից ծովի ավազանին նվիրված ուսումնասիրություններ, Բրիտանական ակադեմիայի հրավերով աշխատել է Լոնդոնի, Օքսֆորդի ու Էդինբուրգի համալսարաններում, Միջազգային հարցերի բրիտանական արքայական ինստիտուտում՝ «Չաթամ Հաուզում», շահելով Ֆուլբրայթի մրցանակ, մեկ տարուց ավել աշխատել է Ջորջ Վաշինգտոնի համալսարանում, բախումնաբանության հարցերով աշխատակցել Մերիլանդի համալսարանում և այլն, և այլն:*

*Ն. Հովհաննիսյանը բազմիցս ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Լիբանանի, Սիրիայի, Իրաքի, Եգիպտոսի ու այլ երկրների պետական բարձրագույն մարմինների կողմից հրավիրվել է խորհրդակցության՝ քննարկելու արդի միջազգային հարաբերությունների կնճռոտ հարցերը: 1998 թ. պաշտոնապես հրավիրվել է ԱՄՆ-ի Սենատի ղեկավարության կողմից՝ որպես զեկուցող և փորձագետ ներկայացնելու հայկական կողմի տեսակետները Հարավային Կովկասում գոյություն ունեցող կոնֆլիկտների առաջացման և հնարավոր լուծումների վերաբերյալ Սենատի լսումներին: Նրան հրավիրել են ԱՄՆ-ի Պետական Դեպարտամենտ, որտեղ քննարկել են Հայաստանի արտաքին քաղաքականության հարցերը, Ղարաբաղի հիմնախնդիրը, տարածաշրջանային և այլ հարցեր: 1995 թ. սեպտեմբերի 22-ին նրան նորից են հրավիրում Պետական Դեպարտամենտ՝ մասնակցելու աշխատանքային քննարկմանը՝ նվիրված Անդրկովկասին և Կենտրոնական Ասիային՝ «Դեմոկրատացումը և քաղաքական մասնակցությունը հետկոմունիստական հասարակություններում» Պետական Դեպարտամենտի ծրագրի շրջանակներում: 2002 թ. փետրվարին Ն. Հովհաննիսյանը Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության կողմից հրավիրվում է Լոնդոն, որտեղ հանդիպումներ է ունենում Ֆորին Օֆիսի պատասխանատուների հետ, որոնց հետաքրքրում էր նրա կարծիքն ու կանխատեսումները տարածաշրջանային հարցերի և կոնֆլիկտների լուծման վերաբերյալ:*

*Մեծ է Հովհաննիսյանի վաստակը հայ արևելագետների նոր սերնդի աճեցման ու ձևավորման գործում: Նա եղել է շուրջ 50 գիտաշխատողների գիտական*

*ղեկավար: Նրա ղեկավարությամբ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդում պաշտպանվել են բազում ատենախոսություններ, այդ թվում՝ Լիբանանից, Սիրիայից, Եգիպտոսից, Հորդանանից, ԱՄՆ-ից, Իրանից, Իտալիայից, Վրաստանից և այլն: Մասնակցել է միջազգային տարբեր գիտական ֆորումների, նրա նախաձեռնությամբ Հայաստանում գումարվել են մի շարք միջազգային գիտաժողովներ:*

*Ն. Հովհաննիսյանը ակտիվորեն մասնակցել է Հայաստանի և նախկին Խորհրդային Միության հասարակական-քաղաքական կյանքին, եղել Սովետա-արաբական բարեկամական ու մշակութային կապերի ասոցիացիայի վիցեպրեզիդենտ, Հայ-արաբական բարեկամության ընկերության նախագահ: ՀՀ նախագահի հրամանագրով 1999 թ. նշանակվել է Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի, իսկ 2003 թ.՝ Հայոց ցեղասպանության 90-ամյակի նշման պետական հանձնաժողովների անդամ: Հայաստանի և Եգիպտոսի միջև միջկառավարական համատեղ հանձնաժողովի անդամ է, Հայ-ատլանտյան ասոցիացիայի պրեզիդենտ և այլն: Պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ նախագահության գովեստագրով, «Բարեկամության բնագավառում ներդրումի համար» Պատվո նշանով, Մովսես Խորենացու մեդալով, Ֆրիտյոֆ Նանսենի հուշամեդալով, «Հայոց Մեծ Եղեռն» ոսկեզօծ մեդալով և այլն:*

*Կրկնենք. ի դեմս Ն. Հովհաննիսյանի մենք գործ ունենք առաջնակարգ, միջազգային մեծ ճանաչում ունեցող ականավոր գիտնականի հետ, որի հայեցակարգային տեսաղրույթներն իրենց նշանակությամբ վաղուց դուրս են եկել հայկական շրջանակներից ու ձեռք բերել միջազգային լայն հնչեղություն:*

*Սրտանց շնորհավորում եմ գիտության մեջ իմ Ուսուցչին՝ ծննդյան 85-ամյակի կապակցությամբ և ցանկանում երկար տարիների առողջ, արևշատ կյանք ու բեղմնավոր գիտական գործունեություն:*

ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ